


Մ Ի Օ Ն

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԱՅԳԱՅԻՆ, ԲԱՆԱԾԱԲԱՆԱՆ, ԳԻՐԳԻՏԱԿԱՆ  
ԵՒ ՊԱՆԱԳԱՅԻՆ

ԵՐԲՐԻՏ ՏԱՐԻ  
ՀԱՅԱՆ ՄԻՆԵՐԱՅ



ՅԵՐՈՒՍԱԼԻՄ



Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԱԲԱՆՑ

1868

« Պետրոս վարդապետն Պրտապուռ »

Տ. Արիստակէս քահանայ Գարախէօսիքիւն :  
 Տ. Գրիգոր քահանայ Աձմէտան Պէտղոս :  
 Տ. Գրիգոր քահանայ Պէշկիճաւու :  
 Տ. Եղիշէ քահանայ Մայր եկեղեցւոյ :  
 Տ. Մարտգէ քահանայ Գարախէօսիքի :  
 Տ. Սուքիաս քահ. Մայր եկեղեցւոյ աւագ ըւսարար :  
 Ամենապետն Պետրոս աղա Պողոտեան :  
 Աշահանեան Մկրտիչ և Կորստիս աղայք :  
 Աճմեան խաչատուր աղա Վանդի :  
 Անտոն աղա Իմանյիկ :  
 Աշահեան Պողոս էֆենտի :  
 Ազար Էֆենտի :  
 Արայիճեան մանտօնի Սարգիս աղա :  
 Արփամեան Միքայէլ աղա :  
 Արսանեան Ստեփան Պէշ :  
 Բարսեղման Զոհարտի աղա :  
 Բարսեղեան Ստեփան աղա :  
 Գարբիէլ աղա (մանտօնի) :  
 Գարբիէեան մանտօնի Մկրտիչ աղա ոսկերիչ :  
 Գաղտագճեան մանտօնի խաչատուր աղա :  
 Գաղտագճեան Ճանիկ աղա ժամադարձ :  
 Գաղտառեան Ղազար աղա :  
 Գայտերեան Զարուժիւն աղա :  
 Գաղտարճեան մանտօնի Գաղբիէլ աղա :  
 Գառնիկ աղա (մանտօնի) ոսկերիչ :  
 Գաթիումանեան Գէորգ աղա . ( 2 օրի . ) :  
 Գաթիումանեան Մանուկ աղա :  
 Գաթիումանեան Զարուժիւն աղա :  
 Գաթիումանեան Ղազարէթ և Համբարձում աղայք ( 2 օր ) :  
 Գարայեան մանտօնի Զակար աղա :  
 Գրիկեան Գրիգոր և Զովաննէս աղայք Կեսարայի :  
 Գուգուեան մանտօնի Զարուժիւն աղա :  
 Գուշապղղեան մանտօնի Զակար աղա :  
 Գրիգորեան Սիմոնիկ աղա :  
 Դարբասարաց ընկերութիւն Է. յիպու :  
 Եաղճեան Յ. Ստեփան աղա Արապկերցի :  
 Եաղճեան Պողոս աղա :  
 Եաղճեան մանտօնի Զովաննէս աղա :  
 Եղվանդեան Վէստիս աղա :  
 Եռասու ֆեան Ալէքսան աղա :  
 Երանան Գէորգ Պէշ . ( 5 օրի . ) :  
 Երէցեան Մինաս աղա :  
 Երասմեան Կարապետ աղա . ( 2 օրի . ) :  
 Զարդարեան Գէորգ աղա Կեսարայի :  
 Զարդարեան Կարապետ աղա :  
 Էլիսեան Պետրոս աղա :  
 Էմմերեան Ղիկիդոս աղա :  
 Թագւորեան մանտօնի Թուքէն աղա :  
 Թաղարեան Վրժանէս աղա ժամադարձ :  
 Թաշնի պաշի Զարուժիւնեան Առաքել աղա :  
 Թիֆլիսիքեան Կարապետ աղա :  
 Թիֆլիսիքեան Ստեփան աղա Կոն. խորեանեան Շիկի :  
 Թագալիքեան Մինաս էֆենտի :  
 Թոխատցի մանտօնի Զակար աղա :  
 Թիստաղեան Աստղա աղա :  
 Իւրաղերեան Ղազարէթ աղա :  
 Խաչատուրեան Մկրտիչալա :  
 Խաչմեղերեան Գէորգ աղա :  
 Կիւլպէնիկ Աթել աղա :  
 Կիւլպէնիկեան մանտօնի Կիւլպէնիկ աղա :  
 Կիւլպէնիկեան Կիւլպէնիկ աղա Կեսարայի :  
 Կիւլպէնիկեան Սէրաբէ աղա :  
 Կիւմիլի շէան Համբարձում աղա Կեսարայի :  
 Կիւմիլի շէան Զարուժիւն աղա :  
 Կիւմիլի շէան Զովաննէս աղա :  
 Կիւմիլի շէան մանտօնի Արքայաճառ աղա :  
 Կիւմիլի շէան Խաչմեղ աղա :  
 Կիւմիլի շէան Գարբիէլ աղա :  
 Համամեան Գաղապար աղա :  
 Համամեան Սարգիս էֆենտի :  
 Համբարձում աղա Սամանիկի :  
 Համբարձում պրիւնտեան Սպարտէն էֆենտի :  
 Հարեկ մանտօնի Արքայաճառ աղա :  
 Հեռունցեան Պետրոս աղա :

Ղազարեան մանտօնի Խաչիկ աղա :  
 Ղազարեան Գրիգորապետ աղա :  
 Զեմարեան մանտօնի Գարբիէլ աղա ոսկերիչ :  
 Ճիգիլեան Ղազարապետ աղա :  
 Ճիգիլեան Զովաննէս աղա :  
 Մայր լլանան Էփրիմ աղա :  
 Մալմանեան մանտօնի Սարգիս Խաչմիս :  
 Մահտօնի Պետրոս աղա վանդի Երեմիա. Աղմամարա :  
 Մանիկեան մանտօնի Մանուկ աղա . ( 2 օրի . ) :  
 Մանուկեան Զակարիկ աղա :  
 Մանուկեան Պողոս աղա :  
 Մանուկեան Զովաննէս աղա :  
 Մանուկեան Սիմեոնիկ աղա :  
 Մերասեպեան Մկրտիչ աղա :  
 Մերսեան մանտօնի Մկրտիչ աղա :  
 Միխիկայեան Միխայելաթիւն :  
 Միտակեան Ճիգիլեան աղա :  
 Միտակեան Խաչատուր աղա :  
 Միտակեան Ղազարեան աղա :  
 Միքայէլեան Սամանէլ աղա :  
 Մովսէսեան Տօղթօր :  
 Մալապէտեան Զակար էֆենտի . ( 2 օրի . ) :  
 Մոսիկեան Զակար աղա :  
 Մուրաթեան Գէորգ աղա :  
 Մուրաթեան մանտօնի Մաղոբ աղա :  
 Զակարեան Պողոս աղա տառեքար :  
 Զովաննէսեան Հայրապետ աղա :  
 Զովեկեան Կարապետ աղա :  
 Ներսէսեան Գրիգոր աղա :  
 Նիկիդուսեան Պետրոս աղա :  
 Նիկիդուսեան մանտօնի Գրիգոր աղա . ( 2 օրի . ) :  
 Նորասուրբեան Զակարիկ էֆենտի . ( 2 օրի . ) :  
 Նորասուրբեան Սիմոնիկ աղա . ( 2 օրի . ) :  
 Շահաւէտեան ընկերութիւն Սեբաստիոն :  
 Շամունեան Աւետիս աղա :  
 Ռազմեան Մկրտիչ աղա տարաֆ :  
 Ռազմեան Մարտիրոս աղա ժամադարձ :  
 Չալեան մանտօնի Գաղտապար աղա Բիւնիկանի :  
 Չալապեան Կարապետ աղա :  
 Չերկեան Գրիգոր և Զովաննէս աղայք :  
 Չրամեան Սարգիս աղա :  
 Չրաքեան Մէլքիս աղա Արապկերցի :  
 Չոլապեան Մանուկ աղա :  
 Պալեան Սարգիս Պէշ :  
 Պալեան Անտոնիկ էֆենտի :  
 Պալեան Զակար էֆենտի :  
 Պալաքեան Աւաթէլ աղա :  
 Պալապեան մանտօնի Խաչիկ աղա :  
 Պարսիզպանեան Վեպտիս աղա :  
 Պարսեան Նիկիդոս աղա Սեբաստացի :  
 Պէրքերեան Խաչմիկ Պէշ :  
 Պէրքերեան Մահալ աղա :  
 Պէրքերեան Սարգիս աղա :  
 Պէշկերեան Միքայէլ աղա :  
 Պողոտեան մանտօնի Գէորգ աղա :  
 Պողոտեան Զովաննէս աղա :  
 Պոլաքեան Սիմոն աղա :  
 Սազմեան Սեբաստիոն աղա :  
 Սահակեան մանտօնի Զարուժիւն աղա :  
 Սարկի (մանտօնի) աղա ոսկերիչ :  
 Սարսաֆեան Կարապետ աղա :  
 Սեբաստի (մանտօնի) աղա :  
 Սերաբիէեան Երանէկ վարժապետ :  
 Սերաբեան Զարուժիւն աղա :  
 Սերաբեան Տօղթօր էֆենտի :  
 Սէրեմպուտէ մանտօնի Սահակ աղա :  
 Սէֆերեան Նշան էֆենտի :  
 Սիմանեան Զակար աղա :  
 Սիմանեան Զարուժիւն աղա :  
 Սուրբախման Նիկիդոս աղա :  
 Սուրբեան Զովաննէս էֆենտի :  
 Սասնապետեան Կարապետ և Բալապէլ աղայք :  
 Ստեփանեան մանտօնի Մկրտիչ աղա :  
 Վարդանեան Արքայաճառ աղա :



ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ  
ԹԻՒ 12.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԴԵԿՏԵՄԲԵՐ 31  
1868.

ԸՕԳԸՅԻՆ ԲԸՆԸՍԻՐԸԸՆ ԵՒ ԴԸԸԻՏԸԸՆ

## Մ Ե Ն Ն Ե Ր Ս Է Ս

ԳԵՂԵՑԻԿ ՏԻՊԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Հովիտ քով զանն իւր  
գնէ ի վերայ ուխտաց  
ՅՎԵ Ժ. 11.

Սուրբն Ներսէս Պարթեւ, որ ի  
բաւամբ Մէծ անունն կը կրէ ազգային  
պատմագրութեան մէջ, և որոյ հայրն  
է ԼԹանագինէ, որդի Յուսկան և  
մայրն Բամբիշ, քոյր Տիրան Թաղա  
ւորի, այնպիսի պատմական կեանք ու  
նի, որ որչափ հարցասիրուի, այնքան  
նորանոր գեղեցկութիւններ և սքան  
չելն օրինակներ կը տեսնուին իւր կեն  
սագրութեան մէջ։ Սեփե նորատակ  
ջունիք Ներսիսի սիրագործ կենաց  
մանրանկար պատկերը ներկայցնելու։

որովհետեւ ազգային պատմագիրները,  
Փաւստոս Բիւզանդ, Մովսէս Խորեն  
նոցի և այլք, այդ պարտաւորութիւն  
նր կատարած են խիստ մանրապատում  
հետազոտութեամբ, ուսումնասիրու  
թեան առատ նիւթ մատակարարելով  
նչ միայն պատմագիրներուն, այլ և վի  
պասաններուն եւ ողբերգուներուն։  
Սեփե դիտաւորութիւնն է միայն փոք  
րիկ փունջ մի հիւսեղ այն ծաղիկնե  
րէն, որոնք կրտսնուին ազգային պատ  
մագրութեան մէջ և որոց ամբողջու  
թիւնը հայրապետութեան ընտիր պը  
սակ կը կազմէ։

Ներսէս մանկական հասակէն կը

զարգանայ Կեսարիայ մէջ գիտութեամբ  
և քրիստոնէական բարեպաշտութեամբ  
և ապա զինուորական կարգի մէջ միտ  
նելով՝ սենեկապետ եւ զինակիր կը  
կարգուի Հայոց Թագաւորին : Դէր  
սէս իւր արտաքին վայելուչ կերպա-  
րանաց և բարձր ու գեղանձնեայ հա-  
ռակին հետ ունենալով և ներքին ազ-  
նիւ բնաւորութիւն , քաղցր բարք ,  
վեճ հանձար , աստուածսիրութեան  
և հայրենասիրութեան զեզուն ըզ-  
բացմունք , կը գրաւէ ամենու սիր-  
տը Հայաստանի արքունեաց մէջ եւ  
իւր չքնաղ համբաւը մինչեւ հռա-  
ւոր տեղեր կը տարածուի :

Փառներտէ հայրապետի մահէն  
յետոյ , եպիսկոպոսունք , նախարարք ,  
կուսակալք և բազմութիւն ժողովրդ-  
դեան կը գումարին Երչակ Թագաւո-  
րի մօտ խորհուրդ կազմելու նոր հայ-  
րապետի ընտրութեան համար : Դաշու-  
վական խորհրդին ներկայ կը լինի նոյն  
ինքն Վերսէս իւր զինուորական շքեղ  
զգեստները հագած և զօրական զրաճ  
ներով զրահաւորուած : Բնարդոկան  
խորհրդի մէջ յանկարծ ամեն ժողովա-  
կանաց աչքերը Վերսիսին կը յառին  
և ամենու միաձայն աղաղակը զՎերսէս  
ի հայրապետութիւն կը հրաւիրէ :  
Վերսէս ի սկզբան կ'աշխատի հրաժա-  
րիլ այս ընտրութենէն , բայց ի վերջոյ  
կըստիպուի զինանիլ Վազի հաւանու-  
թեան առջեւ : Օտրականները կըսկը-  
սին լալ երբ Վերսէս կը մերկանայ իւր  
զինուորական զգեստներն ու զրահնե-  
րը , բայց ժողովը կը բերկրի , երբ կը  
տեսնէ որ Վերսէս հանդերձեալ է  
զրահաւորիլ արդարութեան և ճշը-  
մարտութեան անգծելի զրահներով ի  
պաշտպանութիւն Երեղեցւոյ և Վազի :

Վերսէս , ձեռնադրութեան սուրբ  
խորհուրդն և հայրապետական օծումն  
ընդունելէն զինի , լիովին կըզգայ իւր

անձին մէջ Վազի վիշաք և տառապան-  
քը , որ արտաբուստ յուճակուն և պարս-  
կական աղբեցուծիւններէն կը տաղ-  
նուպէր և ի ներքուստ զեղծմանց և  
երկաթափութեանց մէջ կը տարու-  
բերէր : Ուստի և նորընտիր հայրա-  
պետը , իւր բարձր կոչման համեմատ  
առաջարկ կը մտնէ գործել , ինչ որ ար-  
ժան է , ինչ որ օգտակար է և ինչ որ  
ժամանակը և ազգի վիճակը կը պա-  
հանջէ : Վերսէս , իւր հայրապետու-  
թեան առաջին օրէն սկսած , խնամա-  
կալ հայր կը հանդիսանայ հայրենեայ  
համար և հայրենեաց պաշտպան՝ ու-  
տարայ առջեւ , ուղղութեան առաջ  
նորդ՝ իւր հօտին մէջ և ազգային իրա-  
ւանց իրաւարար՝ արտաքինոց առջեւ :  
Թուե՛նք համառօտիւ այս Սէփ հայ-  
րապետի սիրագործութիւնները - եւ  
հաւաստե՛ք մեր ասածները :

Վերսէս ժողով կը գումարէ Տարս-  
նոյ Վաշիշաթին մէջ բազմութիւն եպիս-  
կոպոսներէ և աշխարհականներէ և կա-  
նոնական սահմանադրութեամբ կը ջա-  
նայ մարդասիրութեան և ողորմածու-  
թեան հոգին արմատացնել Հայաս-  
տանի մէջ : Կը չինէ ամեն գաւառաց  
մէջ աղքատանոցներ և հիւանդանոց-  
ներ՝ բորոտներու , ուրուկներու եւ  
հաշմերու պատուապարութեան համար ,  
որոնց մինչեւ այն ժամանակը պիտի  
համարուած էին և անգթութեան ե-  
րեսէն փախած՝ ամառի անապատներու  
և քարանց ծերուքերու մէջ կը բնակե-  
ին , և այս աղքատանոցներու համար  
հասոյթ կը նշանակէ պողպաթ ագա-  
րակներէն , արօտականաց կաթնէն և  
գեղովանէն և իւր խոտ անուն սար-  
կաւազը ընդհանուր վերատեսուչ կը  
կարգէ այս բարեգործական հաստա-  
տութեանց վրայ : Կը չինէ ինքեւաններ  
և պատուապարաններ՝ ճանապարհորդաց  
որոց , ծերոց և կարօտելոց համար :

կը չինէ միանձանց մենատոտմաներ եւ փառանքաւորաց եղբայրանոցներ՝ ուսմանը և գիտութիւնը ծաւալելու համար, որոց և տեսուչ կը կարգէ նշա նաւոր անձինք՝ Շաղիտայ, Կպիփան, Կփրեմ, Գինգ և ուրիշները ։ Այնպէս որ Անձին Երարփի հաստատած քարեգործական և ժառանգաւորական շինուածոց թիւը մինչեւ 2000 կը հասնի, ըստ վկայութեան ազգային պատմագրաց ։

Երեսէն ազգին մէջէն ղեղձումները և հեթանոսական սովորութիւնները բառնալու համար՝ յորդորանք և կանոնադրոն սահմանադրութե կ'արգելու՝ մերձաւորաց ինամութիւնը կամ ամուսնական տոհմակից խառնակութիւնը, որով եղծեալ էին մանաւանդ նախարարազունները և իշխանազունները, իւրեանց սեպհական ազատութիւնը և ստացուածքը այլոց չանցնելու ազահութեամբ ։ Կարգելու նմանպէս մեռելոց վրայ կատարուած յուսահատական կոծումները, սեւազգեստին և այլ սնտախալաշուութիւններ, և այսպէս ազգականութիւնը կը սրբէ, ընտանեկան կեանքը կը մաքրէ և քրիստոնէական յուսով կ'ամրապնդէ ։

Երեսէն կը չընի գաւառէ գաւառ քողարքէ քաղաք և գիւղէ գիւղ եւ իւր հայրապետական ինամքը հաւաքարտպէս կը տարածէ ամենուէն վրայ, հանապազօր սեզանակից կ'ընդունի ոչ միայն նախարարներ և կուսակալներ, այլ մանաւանդ աղքատներ, կարէր, կոյրեր, մարմնահարներ և վրաւորներ, որոց վերքերը շատ անգամ իւր ձեռքով կը լուայ, կ'օծանէ և կը դարմանէ, գիւղական խրճիթները և տանիքները հայրապետական շքեղ գահայք համարելով իրեն համար և խրատուց ու քրիստոնէական յորդորանաց և մի խիթարութեան գեղեցիկ ամբիւն ։

Երեսէն, ինչպէս ասացինք, հայրէ հայրենեաց մէջ, իսկ օտարաց առջեւ պաշտպան հայրենեաց, և ահա երբ կը լսէ թէ Յունաց թէոքոս զօրավարը կուգայ Հայաստան աւերելու, նա առջեւը կ'ենէ, զայրայթը կը զնջուցանէ, կը դիմէ Իււզանդիոն Հայոց պատանդները կ'ազատէ և կը դառնայ Հայաստան ։

Երեսէն Լըշախաւանի բնաջնիւ կուտորածէն մատաղ մանուկները կ'ազատէ, սրթով (կարով) մի գոմի մէջ կը կրէ և զայեակներու կը յանձնէ, կը սընուցանէ և կը դարմանէ, որոցմէ սակաւ ժամանակէն ղինի Լրթունեաց նախարարութիւնը կը ծաղկի ։

Երեսէն քաջ կը հասկնայ ազգային միութեան խորհուրդը և զօրութիւնը, և երբ Ալաղէս Իււզանդիոնէն և Շաղիտայ Պարսկաստանէն և Լըշախալ ու նախարարաց երկպառակութիւնը Հայաստանէն, կործանումն կրպառնան ազգին և եկեղեցւոյն, իսկոյն կ'աճապարէ նախարարները և թագաւորը միմեանց հետ հաշտեցնել և ուխտել տալ ։ Իր խփառորը վարդապետին և նախարարները ծառայէն միմեկուրեւին ։ Իսկ ինքն, իւր սարկաւազը Կպիսկոյոս ձեռնադրելով և աշխարհին վերակացու կարգելով, վերստին կը դիմէ Ի Իււզանդիոն Լըշախ թագաւորի թրդթով և կը ջանայ Ալաղէս կայսեր լուպառնալիքները զերուցանել ։

Երեսէն հարածանք կը կրէ Ալաղէսէն և կ'աքսորուի ամայի և անմարդաբնակ մի կղզի, խոտաբուռ կեանք կը վարէ, կը առգնապի մենաւարութեան մէջ և կ'ողոթթէ հայրենի աշխարհի ազատութեան համար ։

Երեսէն, Ալաղէսի մահէն յետոյ կ'ազատի աքսորանքէ, կը ներկայանայ մեծ թէոքոսին, նորա սիրտը կը գրաւէ իւր վառ հայրենասիրութեամբ ։

ի. Պօլոյ տիեզերական ժողովին՝ մէջ  
իւր համառու կը հուշակէ ՚ի շա-  
քրս 150 հայրապետաց, և ապա ուրա-  
խութեամբ կը գառնայ Հայաստան,  
իւր սիրած և պաշտօնական հայրենիքը.  
և սակայն երբ սպանութեանց և ան-  
գլխութեանց գաւթեր կը լսէ, սիրտը  
կը ճնկն, հոգին կը խռովի, արտասա-  
ք քաշելով աչքերէն՝ կրակոյ յանդիմա-  
նել, նախատել և ամենքը յորդորել ՚ի  
քէր և ՚ի միութիւն:

Ներսէս, երբ կը տեսնէ թէ Շա-  
քրէ Հայաստանը կ'աւերէ, բիւրու-  
շար քրիստոնեայք կը ջարդէ և կը գե-  
րէ, իսկ նախարարք փոխանակ աւեր-  
ման առաջն ստանելու, Երզնկ թագա-  
ւորին քննանդիւր կը լինին, ամենքը  
կը ժողովէ, կը յորդորէ և կը համոզէ,  
ք հնազանդին հայրենի թագաւորին,  
միաբան պատերազմին Շաքրէ հիմ  
և չը թողուն որ պարսկական մոգակցո-  
նութեան հուրը Հայաստանի քրիս-  
տոնէական ծառատունկերը այրէ: Ներ-  
սէս այս նշանաւոր խօսքերը կը կրկնէ  
Երզնկէն բարբոց նախարարներուն.  
«Եթէ քիւր չար իցէ Երզնկ, սակայն  
առտուածապաշտ է. և եթէ մեղաւոր  
էս իցէ, սակայն թագաւոր ձեր է» (1):

Ներսէս կը տեսնէ Հայաստանի ու-  
ղէտները, Շաքրէ հիմ անգլխութիւն  
ները, Մարութանի ուրացութիւնը,  
եղիսկոսոսայ կապանքը, նախարարու-  
ղուն տիկնանց խեղդամահ կախումն  
բերդերու պարիսպներէն, սակայն չը  
շուստանաիր, Պապը կը թագաւորե-  
ցունէ Երզնկայ տեղ, Հայոց բանակին  
հետ պատերազմի գաշտը կ'ենէն ՚ի Փե-  
րաւ, ահաւել ճակատամարտին ժա-  
մանակ կը բարձրանայ Նպատ լեւը,  
հետը կ'անուռ և Պապ, թագաւորը  
յուզութիւն և ՚ի գգատուութիւն ածե-

րա համար, մինչդեռ հայկական և  
պարսկական զորքանակները իրար կը  
բախեն, ինքը իւր բազու կնետը և սր-  
տը գէպի երկնք կը բարձրացնէ. կ'ա-  
ղօթէ Հայաստանի փրկութեան հա-  
մար, և կնեղեցւոյ աղաատ թեան հա-  
մար, և անո Պարսիկը կը յաղթուի,  
ուրացութիւնը կը պատկառի և Սե-  
բուստան, փոխանակ թագի, եւ աղեղա-  
շամիրով կըղատուի Սեբաստապետէն:

Սյապէս ահա Ներսէս կը կատա-  
րէ իւր հայրապետական պարարք, առ-  
քատները սփռելով՝ իւրենաց իրը  
ճիթներուն մէջ, կայսերները ամա-  
քելով՝ իւրենաց պալատներուն մէջ,  
թագաւոր և նախարար յանդիմանե-  
լով և խրատելով՝ աղքային ժողովե-  
րու մէջ, զօրականները քաջալերելով՝  
պատերազմի գաշտին մէջ, և ՚ի վերջոյ կը  
թունաւորուի Պապ թագաւորի ձեռ-  
քով և կը թաղուի թիրն աւանի մէջ.  
Եւ այց միթէ մեծ մարդկը կը մեռնին  
և կ'անցնին աշխարհէս: Սչ երբէք,  
Սարգը հոգի է, իսկ մարմինը գործի  
հոգւոյ. Վարժին կը խորտակի և կը  
փոխանայ, իսկ բարի գործքերը հոգ-  
ւոյ հետ անմահ կը մնան, Ներսէս  
անմահ է իւր բարի գործքերով: Նն  
մահ է պատմագրութեան մէջ, ան-  
մահ է եկեղեցւոյ յիշատակարանին  
մէջ, անմահ է կենաց գալուստեան  
մէջ: Վասն զի, ժողովրդատէր, իրաւ-  
ւատէր և ճշմարտասէր կեանքը մահ  
չունի: Վասն զի հօտի համար զհաճ  
կեանքէն կ'ըսկրի ճշմարիտ կենդա-  
նութիւնը, ինչպէս անձնութեան թե-  
նէն իսկական գիւտ անձին: Մի է  
անմահութեան կանոնը. Բոտուծոյ և  
ժողովրդի համար իւր անձը ուրացողը  
և կորուսանողը՝ կը գտնէ (1): Մի կա-  
նոնի կատարումն կը տեսնենք ամեն

(1) Երզնկ. Դպր. Գ. ԳԼԸ ԺԵ.

մեծ մարդկանց կենտոյ մէջ : Ներսիսի  
կեանքն է աւրեմն մի կանոնադիրք  
հովուական ճշմարիտ մեծութեան :  
Ներսէսն է ԳԵՂԵՑԻԿ ՏԻԳԵՐ ՀԱՅՐԱ  
ԳԵՏՈՒԹԵԱՆ :

## ԽՈՐՀՐԴՈՒԹԻՒՆ

### ՍԻՆԿՆՈՒԹԻՒՆ ՎՍԵՑ

Նորարանայի ճշմարտութիւն մի  
է թէ « Սարգուս արժանաւորու  
թիւնը իրեն սիրոյ և միութեան մէջ  
է ու քանզի մարդիկ՝ բանական և ըն  
կերական էակ ըլլալով իրարու օժան  
դակ, նեցուկ և զօրավիշն ըլլալու,  
իրարու թիկունք տալու, զիրար սիրե  
լու և վերջապէս մի բնութիւն կազ  
մելու համար գերաբուռ Նարսէն ըս  
տեղծուած են, ուստի ուր կարող են  
յուշող իրենց արժանաւորութիւնը,  
եթէ ոչ ընկերական միութեան և սի  
րոյ մէջ, Նարսէսայ, վասն զի մարդը՝  
իւր ծնած ժամանակէն այս երկու  
կենդանարար ձրից արձատր իրեն փա  
փուկ օրտին մէջ ունենալով, մի միայն  
իրեն կամայ օրինաւոր գործունէու  
թենէն և ջանից քրտուհիւն կախու մի  
աւնի այս տնկոյ աճելոյն ըլլալուն,  
և պողոց արգաստուորութեան յայտը,  
երբ նա գիտնալով այս սիրոյ և միու  
թեան բարիքները, փոխանակ քրտամբ  
դանոնք ուսգելու՝ զի հեղձուցանէ իւր  
կրից տապախառն խորշակով, ան  
շուշտ այն ատեն պիտի վայելէ անոնց  
քրտնելի արգասիքները, իայց երբ կը  
սկսի զգալ այս երկակի պարտաւորու  
թեանց զինքը ենթակայ ընող կենսա  
կան սկզբանց հարկաւորութիւնը, այ  
սինքն սիրոյ և միութեան կարեւորու  
թիւնը, — երբոր մաքաղ մանկութե  
նէն կը փոխադրուի գործակաւոր  
պատանեկութեան վիճակին, երբ իւր

մարմնոյ մարմագութիւն տակ սքծողաւոր  
անմահ հոգւոյն կարողութեանց սու  
կաւածանանց պայծառութիւն հասու  
կ'ըլլայ մարդկութեան անցեալ, ներ  
կայ և ապառնի վիճակին, այն անկա  
յուն վիճակին՝ որն սր փոփոխութեան  
ենթարկուած, մարդկային խահակա  
նութեան կը կարօտի զայն բանակա  
նութեան՝ և բնութեան արարչին կա  
մայ շուղին մէջ մուծանելու, և վեր  
ջապէս առաւել այն ատեն մարդու  
մէջ կ'առաւելու այս զգացմանց իլըք  
տու մը, երբ սո իւր մտաց հորիզոնը  
կ'ընդարձակէ հմուտութեանց բազմու  
թեամբ, բարձր գաղափարաց ճախու  
թեամբ և կենդանի նպատակաց լու  
սաւոր սկզբունքներով : Նշաւասիկ այս  
միջոցիս նա ամենայն զօրութեամբ կը  
ցանկայ մղուիլ այս պարտաւորական  
զգացողութեանց գործադրութեան  
ասպարէզը, խելամուտով ակն յայտնի  
պարզութեամբ որ իրեն կենդանա  
թիւնը, իրեն բուն արժանաւորու  
թիւնը և բովանդակ փառքն ու պար  
ծանքը սիրոյ և միութեան մէջ է :

Նո՞ր մեր խորհրդածութեան նը  
պատակը այստեղ՝ պիտի ըլլայ խօսել  
միութեան վրայ, անոր կերպ կերպ  
զօրութեան, անոր պակասութենէն  
և զայն գէպ 'ի չարն գործադրութե  
նէն յառաջացած անթիւ կորստեանց  
վրայ, այլ քանզի միութիւնը սէր կը  
պահանջէ, և սէրը՝ միշտ անոր նախըն  
թաց հանգամանքն է, ուստի երկու  
քրն եւս իրարմէ անբաժան պիտի  
գտնուին : Արովհետեւ սէրն է պա  
րագլուխ և հիմն բնական և բարոյա  
կան օրինոյ և պարտաւորութեանց,  
ուսկէ կը բղխի և միութիւնը, ուր որ  
ճշմարիտ սէր կայ, հոն բարեբար մի  
ութե՞ գահը անկործան է, անխախտ  
է և մշտնջենաւոր, և ուր ճշմարիտ  
միութիւն կայ, հոն բարեաց բազմա

տեղակայումք թուրքական, արգելադրումք թուրքական, հաստատակարար կենաց և շահույց արահատական թուրքական, մեծ տոյց և խղճի տղտուկ թուրքական, խաղաղութիւն քաղաքական պատերազմաց և կրօնական վիճաբանութեանց և բաժնակալութեանց, դահերութեան և բարձրացանկութեան սպառնալից, օրինաց կատարեալ գործադրութիւն վերաբերելով առ Վստուած և առ քաղաքական ընկերութիւնսն, և հոն կը նկատուի մարդկային սեռիս արժանաւորութիւն և փրկութիւն:

Վրդ՝ ճշմարիտ միութիւն ըսելով կ'իմանանք որ կայ միութիւն մ' ալ որն որ սուտ և վնասակար է մարդկային ազգին, ի հարկէ քանի որ Վստուած անձնիշխան և աղաւթ կամք տըռած է, կարող է իրեն մէջ Վստուծոյ տուգնորած մէկ բարի ձիրքն ալ դէպ ի վատը չարաչար գործադրել, որ սուտ ու կեղծաւոր սիրոյ հետեւութիւն է, ուրեմն այն միութիւնը միայն օգտակար պիտի ըլլայ իրեն, երբ ճշմարիտ սիրոյն վրայ հիմնուած է: Այն միաբանութեան արգասիքը բարի եւ մշտնջենական և համապատասխանող է Վստուծոյ կամաց, մարդկութեան պոյմանին և ճշմարիտ սիրոյ, երբ իսկ հակառակութիւնը, մտաց անաշուտ դատողութիւնը և արդարութիւնը, իրեն առաջնորդ կ'օժենայ: Նա երբեք չմեկընթիւն և չիճնուիր բռնակալութեան ժանեաց տակ, երբ իրեն ձեռքը բլուռած դրօշակը, ճշմարիտ ազատութեան դրօշակն է, նա իրեն հակառակորդին թմրութիւնն ալ չ'ուզէր, ինչպէս որ չար միութիւնը կ'ուզէ, որպէս զի անխափան իրեն գործը տեսնայ, որպէս զի իրեն ամբարտաւան և յանգուգն նպատակը յառաջ տանի: Բայ, ճշմարիտ միութիւն մը ասոնք երբեք չունի, այս տեսակ չարամիտ միութեան մը արդիւնքը չարիք է և բարեկամս յետագիտութիւն, իսկ բարեկամս յետագիտութիւնը գիտէ որ Վստուծոյ կամաց ընդգէմ եղող որ և է, ցէ իրողութեան և անպատկառ նըպատակի համար ձեռնարկուած արարքի մը կորուստը անհրաժեշտ է, նա ձանձրած է որ տիեզերքիս մէջ գրուած և բոլոր արարածոց գործոց հակողութիւնը անաշուտ և զօրաւոր դատարի մը: Այն է Վստուծոյ նախախնամութեան տակն է, որ կը խլէ և կ'ոչնչացունէ այն միութիւնները որոնց նպատակը չար է, ընդ հակառակն կը պաշտպանէ, կը զարդացնէ և կ'օրհնէ այն տեսակ միաբանութիւնը որ համորէն մարդկութեան պաշտպան վեհապետներու, և ճշմարիտ ազատութեան՝ կամ որ նոյն է խղճի և մտքի ազատութեան եղբայր բարձրացունելու համար կը միանան:

Հայրնք անգամ մը բնութեան վրայ և կրօններնք անզգայ տարբերաց բաղադրութեանն յառաջ եկած արդիւնագորութեանն, կը տեսնենք որ երբ յետագիտութիւնը հետ բաղադրութեանն կը միանայ, շատ մը յետագիտութիւն արդիւնք կ'արձակէ: Վստուծոյ երբ նպատակաւ մը այն ցիրուցան քարերը իրարու քով կը միանան, պատասխան մը կը կազմեն: Վարակ թեւ մը զոր շատ դիւրաւ կարող եմք ձեռքով կրտսրել, բոլոր երբ քանի մը հաստ մեկտեղ կուգան իրարու հետ կը միանան, այն տեսնէ ձեռքը կորելը անհնար կ'ըլլայ: Վստուծոյ է և մարդկան միաբանութիւնը, բայց սոյն միութեան չար գիտող և կաշտնաւորող մը կայ, որ իրեն կամաց հաւատաւոր մը անկէ դուրս բան չի ինդրեր: Ուստի աղէկը յառաջ կը տանի և կ'արդիւնաւորէ, իսկ գէշը բարորդին կը փշուցնէ և ոչնչութեան կը մատնէ:

Վստուծոյ արդիւնքը միանգամ նաեւ

ազգաց օխեղերական պատմութեան  
թերթերը, յեղյեղներ մեր մտաց մէջ  
նոյն էջերուն մէջ պարունակուած եւ  
ղեղութեանց մի փոքր մասը, այն տակն  
հաստատագէտ մարդկան գործքերով  
ալ կ'առուգուի մեր ըստծին ճշմար  
տութիւնը, որ միութիւն մը իւր կազ  
մութեան նկատմամբ կարող է բարի  
կամ չար հետեւումներ ունենալ, չար՝  
միաստե ենթարկած է մարդկութիւնը,  
և բարւոյն մէջ գտեր է մարդկութիւ  
նը իւր երջանկութիւնը :

Վասն զի այն տեղապատմութեան  
մէջ պիտի գտնենք բազմաթիւ օրինակ  
ներ, շատ և շատ իրական իրողութիւն  
ներ, որոնք անցեալ դարու գաղափա  
րաց որսիտութիւնը և անոնց հետե  
ւութիւնը մեր յիշողութեան մէջ զար  
թուցանելով պիտի գրգռեն զմեզ հե  
տեւիլ օրինաւորին և փախչիլ ապօրի  
նաւորէն, ըստ բնական օրինաց «բա  
րին է առնելի և չարն խորշակոյ» : Երգ  
տեաները ուրեմն ճիշդ է անգութ աշ  
խարհակայնեով հաստատուած ըն  
դարձակածաւալ Վարդին — պարտեցաւ  
Յուդա մակաբեան փոքրիկ միութե  
նէ մը : Սթնոյրտին որ եզրը փոշիա  
ցած և անտեսութեան մատնուած է  
այն ամբարտաւան Սակեդոնացին եւ  
Կարբեդոնացին, հապաքու Հռոմիւր,  
որ զանոնք կրէց այսինքննաւածեց և ս  
չնչացուց զՍակեդոնն և զԿարբեդոն,  
մինչգեռ ինքը օրինաւոր նպատակաւ  
կը պատերազմէր, հապա Պարսիկը, և  
ուրիշ շատեր, Վանդակն ոմանք յայտ  
նի է որ բարբառիկն անյայտացան, և ո  
մանք ալ զօրութիւննին կորուսած և  
անպատկառ ազգեցութիւննին սպա  
ռած տակաւին առկայծեալ կը մնան  
մարդկութեան և ազգութեանց աւ  
պարիզին վրայ : Եւ ազգերէն և տե  
րութիւններէն ինչպէս ըսինք, ոմանք  
միութիւն ունէին, միանգամայն եւ

հզօր, հզօր միութիւն մը իրմէ տկոտ  
միութեանց վրայ ազգեցութիւն կը  
բռնեցունէ, բայց ստոնցը բարբարո  
տական ընդդէմ խղճի և արդարու  
թեան, ընդդէմ օրինաց և ընդհա  
նուր մարդկութեան ըլլալով, մարդ  
կութիւնը շատ միասնեւոր ենթարկե  
լէն զկնի իրենք և ս շնչացան յաշխա  
հէս : Իսկ ոմանք ալ միութիւն չու  
նենալով՝ երկպառակութեամբ իրենց  
մեծ մասը կործնուցին :

Եւ տեղեկութիւններէն յայտ  
նագէտ կ'իմաստասիրենք թէ մարդու  
անպատճառ միութիւն հարկուոր է ք  
և այն պէտք է նպատակաւ և միջոցաւ  
բարի ըլլայ, որպէս զի իրեն ամբողջին  
կամ մասանց օգտին համար մարդկու  
թեան չը միասէ երբեք : Եւ ահա այս  
պիտի միութեան տրժէքը քաջ կշռու  
դատող, ճանչցող և միանգամայն եւ  
գործադրող տէրութիւն կամ ազգ  
կամ ընկերութիւն ընդհանրապէս քը  
րիստոնէութեան դարուցս մէջ կը նշ  
կատուի, կամ պէտք է որ ըլլայ, ուր  
ազգերը բրիտաննական և աւետարա  
նական ապատամիտ ըլլաւով լուսաւոր  
ուած՝ դէպ ի չարք գործադրուած մի  
ութիւնը ոչ թէ միայն բարբարոսա  
կան բռնութիւն պէտք է համարեն և  
անկէ խորշեն, այլ և բարենպասակ  
ընկերութեամբ ուրիշին օգնելու ըս  
կողմները նուազ պէտք է ընդունին ու  
հաստատեն : Վասն զի քրիստոնէութե  
ան հիմնադիրը, մարդկային ազգի  
փրկիչը, տալուորեց մարդկութեան սրբ  
տին խորքը այս միութեան սրբազան  
ղգացողութիւնները, ճանչցուց եւս  
առաւել անոր հիմը պահպանել, որ է  
սէր ունենալ, սիրել զընկերն, սիրել և  
բոլոր մարդկութիւնը և այս սիրոյ զօ  
րութիւնէն րդխեալ միութիւնը կամ  
միաբանութիւնը պաշտել և պաշտպա  
նել, «Եւ յոյս : ծանկոյն զձեզ ամենեւ

քեան եթէ իմ աշակերտք էք, եթէ ոք  
 րիցէք զմիմեանս ։ (Մարգարէ Վրիտառ  
 սի պատուիրանաց հաճեմատ և բնական  
 նորոգէն ի հարկէ նոր իրական պարտաւ  
 արութիւնն է մարդկութիւնը սիրել  
 անոր Եփեսոսի, նպատակել և միշտ  
 անհնաւ գտնուել և բարեբարել ։ Բա  
 րսն զի մարդիկ ցնկերական ըլլալով ի  
 բարութեան շարունակ կարօտութիւնն ունին,  
 քոյց եւս առաւել դարձեալ ի խառ  
 սի պատուէրին համաձայն՝ «Թէ եր  
 թայք առաւել առ ոչխարս կրտսեա  
 լըս ասին իօրայելիդ, իրեն առաջին և  
 պրագածն պարտքն է իր միութեան ամ  
 բողբոթենէն չը բաժնուիլ, նախամե  
 ծար համարել աւելի իրեն հայրենեաց  
 օգնելը, իւր գերդատոսնին մատակաւ  
 բարեբարել և ազգին ձեռնտու ըլլալու ըզ  
 րացումը ։ (Մարգարութիւն չէ եր  
 քէք թողուլ հայրենիք, ազգ, անտես  
 առնել տգային ընկերութիւն, ազ  
 ցայնաց թշուառ խմելք, երթալ մա  
 տակորորել օտարաց, օգնել և օժան  
 ցանել օտարաց, ամբողջ ցանկելու ջա  
 նալ տղազք ընթերցութիւններ ։ Եւ, ա  
 սիկա բնութեան օրինաց իսկ դէմ է  
 և կատարեալ անօրէնութիւն» ։ «Իր զն  
 տանեաց իւրոց խնամոյ տարցի, ի հա  
 ւատոյն տրտցեալ է ու ամեն անհատ  
 պարտաւոր է նախ իր ազգային ամ  
 բողբոթենը պահպանել, և երբէք  
 զայն մատուցել բաժնելու չի մասնա  
 ցիլ, որովհետեւ «Լճեայն տուն բա  
 ժանեալ յանձն իւր՝ աւերի ու ազգայ  
 նոց ամենայն անձնաւորութեամբ ձե  
 ւոն չը կարկառող անձմբ, անկորույ կը  
 գանաւ ընդհանուր մարդկութեան նպատ  
 ատաւոր ըլլալ և եթէ ըլլայ անգամ  
 օրինաց դէմ է, ժխտած կ'ըլլայ արդա  
 րութեան և կըրդժէ իրաւանց և պար  
 տուց անհերքելի սկզբանց ։

Իրաւունք բոնք, և կրտսեայինք  
 մեր նպատակէն քիչ մը հեռանալ ։ Եւ

այնպէս նկատուլով թեան՝ առնել թէ  
 «Իրաւանց սկզբունքը՝ ինչպէս ուսն  
 անհատէ՝ նոյնպէս ամբողջ ազգերէն  
 կը պահանջէ արդեօք կենքօք չափ իւ  
 րեանց ազգային իրաւունքն և սեփա  
 կանութիւնը պաշտպանել ։ — Լճ, ի  
 վան զի եթէ անհատ մը մասնաւորա  
 պէս իրեն սեփական իրաւանց յափը  
 տակիջ կ'առնենայ, և պարտաւոր կ'ըլ  
 Լայ նոյն իրաւունքը չը յափշտակել տա  
 լու հատար՝ իրեն հակառակորդին հետ  
 մինչեւ վերջին շունչ մտանշել (որով  
 հետեւ եթէ տնհոգ կենալու ըլլայ,  
 թշնամին սխերիմ ըլլալով, Գոհ չը պի  
 տի ըլլայ այս նիւթական յափշտակու  
 թեամբ, ոչ բարոյականին եւս ձեռ  
 նարկելու պիտի յանդգնի) ։ Հապա  
 րքան առաւել Լճք մը պարտաւոր է  
 ուրեմն իրեն սեփական և ճշմարիտ իւ  
 րաւունքը զիմոյի թշնամեայն յափը  
 տակել չը տարու համար ամենայն հա  
 դեմ դէմ չ'ընել, և այս ալ կայ որ,  
 որքան մէկ անհատի թէ նիւթական  
 և թէ բարոյական իրաւանց յափշտա  
 կութիւնը ու բնութարարութիւնը առ  
 զգալի ըլլայ, ոչքան ալ զգալի և նշա  
 նաւոր է բովանդակի Լճքի մը ըրած իւ  
 րաւանց կրտստը, և ազգ մը եւս ին  
 չով կրնայ իրեն զօրութիւն բնութարար  
 զին դէմ ամբարտաճ կանգնել, եթէ  
 ոչ իրեն տնդածոց միութեամբ, անոնց  
 օժանդակութեամբ և մտնաւանդ Լճ  
 տուծոց պահպանողական աշուն զօրու  
 թեամբ ։ Իսկ երբ կ'առնենայ ազգ մը  
 նախախնամութեան աջը իրեն պաշտ  
 պան, — երբ որ ազգ մը իրեն միւ  
 թեան բարի նպատակն ունենայ ։ Լճ  
 ջանիկ է ուրեմն այն ազգը, ինչպէս  
 շատ դարեր յառաջ կը գոչէր մարդա  
 րէն «Իրանի այն ազգին որուն հետ  
 է (Յակոբին տէր Լստուածք ու

Իրանէն ալ տարակոյտ չը մնայ և  
 վարանմունքն ոչ երբէք, թէ որքան բա

րիքներ կարող է ծնանիլ մարդկան հաւաքումը և միտքանուծիւնը, վասն զի ինչպէս « պարզ մեղուաց գործեն ըզմեղը, նոյնպէս և միտքանուծիւն եղբարաց զառաքինութիւն » ։ անուանելի զճիւղ, և ահա այս անիւծ բարեաց համար է որ մարդարէն կը բացադան չէ « (!) Ի բարի, կամ զի վայելուչ, զի բնական եղբարք ՚ի միասին » ։ Այս է քրիստոնէութեան սկզբունքը, այսպիսի բարացական միութիւն է անոր օրինակը նպատակը, զոր գործադրող ազգերը երջանիկ են ։

Իսկ եթէ Վրիստոնէական լուսուոր դարերուն մէջ, այս միութեան գէժ զինող և անոր հակառակ ըսկզբունք պաշտողներ պատահեցան, այն ալ տգիտութենէն և մտաց կուրուծենէն յառաջ եկած բան մ' է, վաղն զի Վրիստոնէութիւնը տիեզերքիս վրայ լոյս սփռեց, քրիստոնէութիւնը բոլորովին կերպարանափոխեց զաշխարհ լուսուորութեամբ, ուր որ այս լուսով պայծառացաւ, որ ազգ որ այս կենսուէտ և բարոյական պայծառութիւնը անխռն օտացաւ, այն սեղ խաղաղութիւնը հառապանջաւ, այն երկիրը կամ ազգը իրեն սերտ միութիւնը ամենայն սիրով պահպանեց, որով և խաւարային դրութեանց գէժ զնեւով միշտ յողթական հանդիսացաւ ։ Որովհետեւ քրիստոնէայ ազգ մը միշտ կը յիշէ « Այս լոյս յաշխարհ եկի, ու եւթէ՝ « և ես յողթեցի աշխարհի ու Վրիստոսի անսուտ խօսքերը, և միանգամայն լուսայ որդի ըլլալու խոստմանը արժանանալու իղծը կը սնուցանէ իւր սրտին մէջ ։ Այս ահա այս սեղ կարող է մեզ առարկուիլ թէ, ինչու՞ հապաշատ ժամանակ բազմութիւն նահատակներ անօրէն իշխանի կամ կուսակալի մը կատապի սրտմտութեանը զոհ եղան, այլ սակայն այս ըսել չէ որ շա

րութիւնը յողթալ է, բռնաւորութիւնը իրեն տղգեցաւ թիւնը միշտ կ'ունենայ, որուն զոհերը ճշմարտութիւն հաստատող կիիքներ և վկայութիւններ են ։ Վրիստոնէից բարոյականապէս յողթող ըլլալու նշանակ են անոնք, վասն զի Վրիստոնէութիւնը նահատակութիւն ըլլալով՝ շատ անգամ իրեն քրիստոսական հեղուծեամբ նիւթական միութիւնը բռնակալաց կատաղութեան զոհեց, չիմնայեց իրեն ճիսութեան, հարստութեան, շքեղութեան, արտաքին և ներքին ամեն տեսակ վայելումներու, սակայն պահեց բարոյական միութիւնը յոգուտ իւր նմանեաց և անկախելով մի վերին և երկնային անդաւ բարեաց ։

Ահա այս տեսակ քրիստոնէայ ազգերէն մէկն ալ մեր Հայաց ազգն է, այս տեսակ զոհողութեանց յանձնառու եղող և իրեն միութիւնը պաշտպանող ազգաց գլխաւորն և հռչակաւորը մեր Հայը եղած է իր սկզբնաւորութենէն մինչև իւր անդամաց ՚ի մասունն բաժնուիլը, և անկէ մինչև յարգքաղցը է մեզ հաւատալ որ՝ մինչև յաւիտեան պիտի պաշտպանէ ։

Հայ օղորդ երբ քրիստոնէութիւնը ընդունելով իւր մէջ, աւետարանական լուսով պայծառացաւ, երբ բարոյական միութեան արժէքը ճանցաւ, այն ստեղծ աւելի սերտ և զմայելի համակրութիւն ցուցուց այս քրիստոսական միութեան, Հայերը այս միութիւնը բաց ՚ի նիւթականէն բարոյականապէս աւելի ամրացուցին իրենց մէջ և առօրէ տիտղոսիւ զայն զարդարեցին ։

Հայերուն այս ընդհանուր բարոյական միութեան ընդգէժ՝ շատ անբարոյականութեան մէջ ըղպցող հրէշներ երեւան ելան, շատ տիեզերաւարսափ բռնակալներ զայն ռանակիտ

քնել ուղեցին. շատ խորամանկ և դաւաճան շողմարտորներ խորդուանել մեքենայեցին. շատ արիւնըւռչող եւ մարդախոշոշ վայրենիներ սուր, հուր, բանտ, կախաղան եւ ամեն անասկ տանձնարաններ գործադրեցին զայն լքուցանելու, խափանելու և ոչնչաւ ցուներու: Այնու բանիւ, սուտ հաժ, բաւերով, քաղանի ուժրագործութիւն ներով և սարսափելի մասնութիւն ներով դէմ ելան, այնու ամենայնիւ ամենուան արիւնքէն դէմ դրաւ և գրգռած է մինչեւ այն կէտը, երբ ամեն Հայ տնթաժան իրարմէ թիկուներ կուտային միմեանց: Երբ որ Հայ ժողովուրդը, և նոյն իսկ Հայոց քաղաքական իշխանութիւն իրեն եկեղեցւոյն ամենադոյն ֆեսա հասած ժամանակ արտաքին թշնամիներէն (Պարսիկներէն, Հագարայիներէն, Թաթարներէն և նոյն իսկ քրիստոնէայ գահասէր ազգերէն,) արթուն ընթուրթեամբ անոր առաջն առնելու կը փութար: Վասն զի մեր Ազգը, եկեղեցին՝ ազգ, և ազգը՝ եկեղեցի համարած էր և կը համարէր մինչև իրեն բաժանման կէտը, իսկ այսօր այս լուսաւոր դարուս մէջ մեր փնտռենք Հայոց միութիւնը, մեր երթանք որսնենք Վարդանեանց, Վահանեանց, Սմբատեանց և Ղազարեանց ազգայնէն արիւնը կրող Հայ՝ մը տերութեանց սահմաններէն մէջ՝ Կիսկինէսի լոպտերը վառենք ճշմարիտ Հայ գանելու. մը մայրաքաղաքի, քու առաջ կամ ամոյի անապատներու մէջ հետախուղելու ելնենք այն ազգասէր, հայրենասէր և որ մեծըն է՝ աստուածասէր նախնեաց եւ Հայրապետաց ոգին կրող աշխարհական մը կամ վարդապետ մը, կամ բլրնաւ չիկայ սիւտի լուենք, և կամ եթէ կայ, նուազ ու անգոր են, և իրենց բարի նպատակը խափանողները շատ

են: Վասն զի չարամիտ մարդիկ անոնց խղճիդոտն եղած են. չեն թողուր որ այս երկու դասը, այսինքն կղերականն ու աշխարհականը իրարու գան, միաւնան, իրարու թիկուներ տալով գործեն, յառաջ գիտեն, գաղտնի խորաւ մանկութեանց ոյժն ու զօրութիւնը խորասակեն և ազգը բարոյապէս եւ նիւթապէս զարգացունեն և պայծառացունեն. այլ ինչ կ'ընեն, — միշտ զերար նախատել և անարգել կուտան, որպէս զի միշտ բաժնուած ծաւն և իրաւութիւն գէմ ատելութիւն սնուցանեն:

Երբ համար այսօր ազգասէր սրբտերը խորին տխրութեամբ համակուած են, ազգային ընդհանրութեան շահը մասնաւորի կը զոհուի յառաջագիմութեան պատրուակաւ: Երբ հայրենասէր ոգին մեծ վտանգներու տակ կը ճնշուի, կը հառաչէ՝ երբ գալը ողջարի գլեհատով կը տեսնէ անմեղ գառներու և հայրենեաց զուակայ մէջ, կը հեծէ, հոգւոց կը հանէ եւ զինքը շրջապատող առարկայներէն հայրենեաց օգնութիւն կը խնդրէ, ինչ տխուր տեսարան: Ինչու տանք ամենը . . . . . իրավէտեւ իւրաքանչիւրը չի յիշելով իրեն նախնեաց փառաւոր յիշատակը, չը յիշելով երբեք մարդկութեան բուռ պայմանը և իւր նախնին փառաւոր վիճակը, չը յիշելով այն ազգասիրութեան սիրով վառուած բորբոքած, և աղատութեան զեփուռը իրենց միութեամբ շնորհանգութեան խորհուրդէն ինչու անգութեան խորհուրդէն ինչու անհաւատարմութիւնը յառաջ տանիլ, մարդկութեան իրաւանց մէջ անհաւատարմութիւն քարոզել, և եթէ իրենցմէ ատկաւ ինչ զօրաւորի մը հանդիպին՝ կը ջանան շողքորթիլ:

Թեամբ զայն որոտւի Լու- շտտերն ալ մանաւանդ կան որ, կարծելով թէ հայազգին ճակատագիրը պայտէօ դրժ բաղդութիւն է գրուած, ուստի քն չուս պէտք է, ասանկ եկեր ասանկ պիտի երթայ բոլորով ետ կը բաշտին . . . յուսահատութիւնը մահ կոչ ուած է, եւ յարստեւ միաբանութեամբ աշխատիլը չարեաց եւ զեղծ մանց կործանուածն . . . « Համամտութիւն բազմութեան յօգտակար ձեռնարկութիւնն, ունի զգոյտութիւն օրինացոյ, բարոյական աւանդ կը յիշեցուցանենք այնպիսիներուն ալ, որոնք բոլորովին անտարբերութեամբ՝ ազգային հսկայաբայլ յառաջդիմութեան աստարեղ բանալու միջոցները միայն կ'երեւակայեն, առանց կործան ման չարին կամ առանց գործի ձեռք զարնելու մեծամեծ բարիքներ կ'երազեն :

Բայց ինչէն յառաջ կուգայ այս աւանդ, եւ ինչ է այս անբուժելի կարծեցեալ վերաց գործանքը, մենք մեր քովէն այս մասին բան մը չենք ուստաւաններ, այլ այս տեղ թող խօսի մեր բոլոր փաստերը վաւերացունող եւ միութեան արեւանայն ու երկպառակութեան չարեաց ականառեւ երանելի Լիզնէն, հորցուններ միանգամ նորա ուշիմ խորհրդոց . ահա քաղցրաձայն եւ միանգամայն վշտակութեան հեզ ձայնիւ մը պատասխան կ'ընդունինք . « Եւս ամենայն չարիք մտանեն իմիս մարդոյ յանուստ միութենէն » : Ի՞նչ ազդու եւ որտեքու խորերը թափանցող խօք մի է . « Եւս գութիւն է մայր բարեաց, եւ անգութիւն ծնող չարեացոյ, սկզբունքը հաստատող սրբազան Լիզ մը սեռումն ու մուսց լուսաւորութիւնը ահա դարման կը ցուցունեն մեզ, հոպա ինչո՞ւ զուրկ է մեր ազգը այս դարմանէն :

Իսկ է որ Հայերը այսօր կորուսած ամեն կորուսանին վերտախ կորող են ձեռք բերել, եթէ ուսման եւ գիտութեան յարգը ճանճման հանդերձ գործադրութեամբ : Այսին զի ինչպէս « Հաւատք առանց գործոց մեռեալ է », նոյնպէս եւս կարող ենք ըսել որ ճշմարտութեան ճանաչումը առանց իրական համոզման եւ գործադրութեան անհոգի մարմին մ'է :

Եւս ուսման պէտքը այսօր կը զգայ ամեն հայ, կը զգայ որ այս ազգային կենդանութեան առաջին թէութիւնն է տարր կոչուած ուսումնն ու կրթութիւնը՝ եթէ Հայ հասարակութեան մէջ չտարածուի, անհնարին է որ Հայ գտնէ իւր առաջին վիճակը, վասն զի այսօր շատ տգէտ Հայեր, անտեղեակ եւ բոլորովին անձանթ իրենց եկեղեցւոյ բուն հոգւոյն, եւ նախնի սըրբազան Հայրապետներուն մեզ կողմէն առանգութեանց, ոմանք ալ գիտնալով անձնական շահաւ համար կա մաւ կուրացած, կը թողան անգիտութեամբ Հայաստանեայց եկեղեցւոյ մայրենի գիրիր, կ'անարդէն իրենց ազգային միութեան սովորութիւններն ու յատկութիւնները օտարին կ'ընդունին : Բնոր Հայեր, չունինք մեր ճշմարտախօս Լիզնէ վարդապետի առաջարկած դարմանէն զատ ուրիշ յոյս, այսինքն ճշմարտ հայու սրտով մաւնալ Հայ հոգւով մտքերը մշակելու, հապա ջանալք, իրախուսինք հայկազունք, մանաւանդ կղերական գաւ, ճշմարտ Եւստոնոյ արաշտօնեայնէր, ժամանակն է ազգին կենդանութիւն տալու, սփոփելու թշուառ եւ որդեղուրկ Հայաստանը բոլոր ժողովրդոց մտաց մշակմամբն ու լուսաւորութիւնն ու չէ թէ շատ մը գիտութիւններու անուաններով . . . կղերականը նախ պիտի սորվի եւ հաղորդէ իւր հոգեւոր

գաւառիսց . նա պիտի մշտնադէս և մշա-  
կէ իւր ժողովուրդը : Եւս հարկ է ու-  
ղիղ դատաւարական և դատաւարակէ  
ազգին մանկան . ճշմարիտ և երկիւ-  
ղած աստուածապաշտութեան սկզբ  
քունքը ուսանի , և ուսուցանէ իր ե-  
տեւէն ընթացող խառն բազմու-  
թեան , ճշմարիտ և քաջ հպմուի մը  
պարտքը յանձն առնու , և նոյն անձ  
նութիւնութիւնը հաղորդէ իւր հօտին :  
Վերջապէս յիշելով նախնի երջանկաւ  
յիշատակ հայրապետները՝ որոնք ան-  
ձամբ անձին կը դատաւարակէին ժո-  
ղովուրդը՝ և աննախանձ կը ջամբէին  
անոր հոգեւոր սնունդ , անոնց շա-  
ղին ջանաց հետեւիլ . անոնց՝ որոնք  
չեն խնայած երբէք ի պահանջել հար-  
կին , ազգին և եկեղեցւոյ համար ի-  
րենց արիւնք թափեր են , բանտ աք-  
սոր յանձն առած են և շղթայակիր  
կոշուած են . անոնց՝ որոնք միջնորդու-  
թեան համար թափառական երկրէ  
երկիր շրջելով , վրդոված են բոլորովին  
իրենց անդորրութիւնը Լճին համար ,  
երբեմն Պարսկաստանի արքայական  
պալատներու անկիւնները . երբեմն  
հազարապետ Լիւրայներու սոքը , եր-  
բեմն , ո՛հ . . . պատկառանք կը բերէ  
ըսել . Քրիստոնէաց աղագոյ կայսերաց  
մօտ , անոնց սոքն ինկած կը պաղտաին  
և կը հայցեն ազգին օգնութիւն ու  
անդորրութիւն : Ուրեմն առանց այս  
պէս սրտով և հազուով միանալու , ա-  
ռանց յօգուտ հասարակոյ միաբա-  
նութեամբ գործելու , միեկութիւն  
գարգալումն եւ յառաջադիմութիւն  
չի կայ :

Սիբիւ Սարգսազ Տէր Սե-  
փան Տիգրանապոլսի ,  
Աշ . ժառ . Վարժարանի :

Ն Ա ի Ս Ա Պ Ա Շ Ո Ր Մ Ո Ւ Ն Ք

Ալապիւնիւնի , Փերի , Խոռթխախ ,  
Այ , և այլն :

Սարգուս առողջութիւնը խոն-  
գարող շատ մը առիթներ կան զորս  
իր բերկրանք ի գործ կը դնենք , ինչ  
պէս են զգայական անչափաւոր բեր-  
կրութիւնք , հանգերծի , կերակրոյ ,  
ըմպելեաց , և այլն չարտաշար գործածու-  
թիւնք , ասանցմէ դատ օգոյն անհա-  
ւասարութիւնը կարող են շատ կեր-  
պիւ մարդուս առողջութեանը վնա-  
սել : Եւս ամենը երբեմն այնպիսի ցու-  
ւալի արդիւնքներ յառաջ կը բերեն ,  
որ ամենէն հմուտ բժիշկներն անգամ  
կը շուարին , ժառն զի ամեն միջոց ի  
գործ դնելէն վերջն ալ տակաւին չեն  
յաջողիր հիւանդը առողջացունել .  
սակայն մենք դիտաւորութիւն չու-  
նինք ասոնց վրայօք խօսիլ , այլ կը թո-  
ղունք որ բժիշկք և կազմաբանք խո-  
սին ու ճշգրիտ կերպով բացատրեն ,  
մեր ուշադրութիւնը նորանոր շարժա-  
ռիթներով կը հրաւիրուի ուրիշ առ-  
թի մը , որ վերոյ յիշեալ առիթներէն  
աւելի մարդուս ազերջանկութիւն կը  
պատճառէ . այնէ ցնորքներն ու առաջօք  
երեւոյթները , որոնց աւամիր զանա-  
զան անուններ տուած՝ իւր մատաղ  
սերունդին կը սովորեցունէ , որով ու  
նոնց թշուառութեան , մինչեւ տարա-  
ժամ մահուան պատճառ կ'ըլլայ , Եւս  
ցնորից անուններն են Լիւրայնիւն ,  
Փերի , Խոռթխախ , ԼԼ , կամ Խառախու-  
սայ կամ Խալիլի , և այլն և այլն : Եւս  
այնպիսի ցնորական խաբեբայ և սուտ  
բաներ են , որք գոյութիւն չունենալէ  
զատ՝ ասոնց վրայ եղած պատմութիւն  
ներն ալ խիստ այլանդակ և խելքի  
դէմ են : Ուստի մենք այսօրերս ասոնց  
յիստակար հետեւութեանը պատա-  
հելով՝ ստիպուեցանք ասոնց վրայ քա-

նի մը խօսք բնեւ, թողլով որ ուրիշներն աւելի հմտակց ու ճշգրիտ բուցատրութիւններ տան յօգուտ հասարակութեան :

Ը.

Աջակիւնիկ :

